# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

## <<ՉՔ-ՊԸԱՇՁԲ-16/5>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Չարենցավան

_04_ _նոյեմբերի_ _2016թ._
ժամը _17⁰⁰_

Հանձնաժողովի նախագահ՝ Բ. Բալբաբյան (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Թովմասյան (ԳՊ/ԳԱ)
Ռ. Սահակյան (ԳՊ/ԳԱ)
Ա. Խանյան (ԳՊ/ԲԱ)
Հ. Մանուկյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Պ. Գաբրեյան (ԳՊ/ՄՀՄ)

### 1. <<ՉՔ-ՊԸԱՇՁԲ-16/5>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտերի բացման մասին

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետև՝ Համակարգ) միջոցով 2016 թվականի նոյեմբերի 04-ին ժամը $17^{00}$-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

### 2. Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր գնի և հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

2.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> թիվ 168-Ն որոշման 44-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Հ/հ | Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Չարենցավանի համայնքապետարանի շենքի հիմնանորոգման աշխատանքներ | 997500 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների | | | |
|---|---|---|---|---|
| | Անվանումը | Էլեկտրոնային փոստի հասցեն | Գտնվելու վայրը (հասցեն) | Տ/Փ-ի ստացականի h/h |
| 1 | <<Մ.ԱՇԽ>> ՍՊԸ | Avagyan.ishxan@mail.ru | ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Արծվաքար թաղամաս | 000031858 |
| 2 | <<Մեծ Հիմք>> Ա/Կ | azaqaryan2011@mail.ru | ք. Երևան, Կարապետյան 9 | 000031913 |
| 3 | <<Վ.Վարդանյան>> ՍՊԸ | vvardanyan.am@mail.ru | ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Գեղարդի 1-53 | 000031922 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

### 3. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները:

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկված գինը (առանց ԱԱՀ-ի)* | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
| 1 | <<Մ.ԱՇԽ>> ՍՊԸ | 720000 | 72000 | 792000 | - | 792000 |
| 2 | <<Մեծ Հիմք>> Ա/Կ | 706000 | 42360 | 748360 | 149672 | 898032 |
| 3 | <<Վ.Վարդանյան>> ՍՊԸ | 733649 | 73365 | 807014 | 161403 | 968417 |

** Առաջարկված գինը (առանց ԱԱՀ-ի)-Մասնակիցների կողմից www.armeps.am կայքի միջոցով ներկայացված գինն է:*

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

### 4. Պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ամբողջական և լիարժեք գնահատման նպատակով հանձնաժողովը որոշեց սույն նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 13[00]-ին ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

**Հանձնաժողովի նախագահ՝** _______________ (ստորագրությունը) **Բ. Բալբաբյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** _______________ (ստորագրությունը) **Վ. Թովմասյան**

_______________ (ստորագրությունը) **Ռ. Սահակյան**

_______________ (ստորագրությունը) **Ա. Խանյան**

_______________ (ստորագրությունը) **Հ. Մանուկյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** _______________ (ստորագրությունը) **Պ. Գաբրելյան**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

**<<ՉՔ-ՊԸԱՇՁԲ-16/5>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի (շարունակություն)**

**ք. Չարենցավան** — **_10_ _նոյեմբերի_ _2016թ._**
**ժամը _13$^{00}$_**

Հանձնաժողովի նախագահ՝ Բ. Բալբաբյան (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Թովմասյան (ԳՊ/ԳԱ)
Ռ. Սահակյան (ԳՊ/ԳԱ)
Ա. Խանյան (ԳՊ/ԲԱ)
Հ. Մանուկյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Պ. Գաբրելյան (ԳՊ/ՄՀմ)

**1. Պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

1.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ամբողջական և լիարժեք գնահատման նպատակով հանձնաժողովը որոշեց սույն նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի նոյեմբերի 14-ին ժամը 15$^{00}$-ին ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

**Հանձնաժողովի նախագահ՝** __________ (ստորագրությունը) **Բ. Բալբաբյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** __________ (ստորագրությունը) **Վ. Թովմասյան**

__________ (ստորագրությունը) **Ռ. Սահակյան**

__________ (ստորագրությունը) **Ա. Խանյան**

__________ (ստորագրությունը) **Հ. Մանուկյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** __________ (ստորագրությունը) **Պ. Գաբրելյան**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

**<<ՉՔ-ՊԸԱՇՁԲ-16/5>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի (շարունակություն)**

**ք. Չարենցավան** **_14_ _նոյեմբերի_ _2016թ._**
**ժամը _15[00]_**

Հանձնաժողովի նախագահ՝ Բ. Բալբաբյան (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Թովմասյան (ԳՊ/ԳԱ)
Ռ. Սահակյան (ԳՊ/ԳԱ)
Ա. Խանյան (ԳՊ/ԲԱ)
Հ. Մանուկյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Պ. Գաբրելյան (ԳՊ/ՄԾ)

## 1. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին

1.1 <<Մ.ԱՇԽ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմված չէ հրավերի պահանջներին համապատասխան, մասնավորապես՝

- Էլեկտրոնային փաստաթղթերը հաստատված չեն սահմանված կարգով թվային էլեկտրոնային ստորագրությամբ *(<<9) էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Ընդ որում, տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով՝ բացառությամբ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերի, որոնց ժամանակ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտով փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.>>՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 35-րդ կետի 9)-րդ ենթակետ, <<ՉՔ-ՊԸԱՇՁԲ-16/5>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.9 կետ):*

1.2 <<Մեծ Հիմք>> Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

- Տուժանքի մասին համաձայնագրում (Հավելված 9) բացակայում է տնօրենի անձնագրի տրման ամիսը, ամսաթիվը:
- Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի համաձայն <<Գումարը թվերով և բառերով>> դաշտում պարտադիր լրացվում է շահառուին ենթակա գումարը, այնինչ <<Մեծ Հիմք>> Ա/Կ-ի կողմից նշվել է նաև արժույթը՝ բառերով:

*(<<4) հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը.>>՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի 4)-րդ ենթակետ, <<ՉՔ-ՊԸԱՇՁԲ-16/5>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.3 կետ):*

1.3 <<Վ.Վարդանյան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

**2. Տվյալներ ներկայացված հայտերի գնահատման արդյունքների և մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին**

2.1 Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց.

ա) Գնահատել բավարար <<Վ.Վարդանյան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը,

բ) Գնահատել անբավարար և մերժել <<Մ.ԱՇԽ>> ՍՊԸ-ի, <<Մեծ Հիմք>> Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտերը:

2.2 Ներկայացված և բավարար գնահատված հայտերի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Վ.Վարդանյան>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

**3. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին**

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ.

բ) 3.1 կետով նախատեսված տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացման ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

**Հանձնաժողովի նախագահ՝** ____________________ **Բ. Բալբաբյան**
(ստորագրությունը)

**Հանձնաժողովի անդամներ՝** ____________________ **Վ. Թովմասյան**
(ստորագրությունը)

____________________ **Ռ. Սահակյան**
(ստորագրությունը)

____________________ **Ա. Խանյան**
(ստորագրությունը)

____________________ **Հ. Մանուկյան**
(ստորագրությունը)

**Հանձնաժողովի քարտուղար՝** ____________________ **Պ. Գաբրեյան**
(ստորագրությունը)